ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,
էլ.փոստ Hayanist11@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

31-ը հուլիսի, 2012 թ., N 10

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2.02.2012 թվականի N4 որոշումը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով ՝
*ավագանին որոշում է՝*

ՈՐՈՇՈւՄ N 10

1)Կանոնադրության 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում:Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք(խառը) խմբեր,որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան»:
2) Հաստատել Արարատի մարզի Հայանիստ համայնքի մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի Կանոնադրության մեջ փոփոխությունը:
Ավագանու անդամներ՝

Կողմ ՝ 5 դեմ ՝ 0 ձեռնպահ ՝ 0

1. ԱՆԱԻԴԱ ԱՋԱՐՅԱՆ
2. ԱՐՓԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
4. ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ (բ)
6. ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ (բ)
7. ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ
31-ը հուլիսի, 2012 թ.
գ. Հայանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01, էլ.փոստ *Hayanist11@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31-ը հուլիսի, 2012 թ., N11

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջով՝ *ավագանին որոշում է* ՝

ՈՐՈՇՈւՄ N 11

1.Հայանիստի համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի /7291.08գծմ./համակարգերը մինչև 2037թ. հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության Կառավարության 22.12.2011թ. N1851-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրով՝ հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Հայանիստ համայնքի ղեկավար պարոն Բ.Սարկիսյանին՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել, սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

Ավագանու անդամներ՝

Կողմ ՝ 5 դեմ ՝ 0 ձեռնպահ ՝ 0

1. ԱՆԱԻԴԱ ԱԶԱՐՅԱՆ
2. ԱՐՖԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
4. ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ (բ)
6. ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ (բ)
7. ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

31.07. 2012թ.

գ. Հայանիստ